ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցվորի կողմից նախապես վճարվել է հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի գումարը, ուստի հայցը մերժելու պայմաններում գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքապետարանի՝ թիվ ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-24/20 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2024 թվականի թիվ 3 արձանագրության 1.2-րդ և 2.1-րդ կետերն անվավեր ճանաչելու, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջների մասին, մերժել, հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Վճիռը կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am